**ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԵՐՊԵՐՅԱՆ**
***Հոգևոր հովիվ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի***
***Ֆիլադելֆիայի հայոց համայնքի***

*«Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի»*

Հոկտեմբեր 26. պատմական ու խորհրդաւոր օր համայն հայ ժողովուրդին համար: Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ մէկտեղուած են տարբեր վայրերէ ու երկիրներէ եկած հարիւրաւոր հայ հաւատացեալ հոգևոր ու աշխարհական պատգամաւորներ՝ ընտրելու համար 132-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հոկտեմբեր 27-ին, Աստուծոյ նախախնամութեամբ, Ազգային-Եկեղեցական Ժողովը Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ ընտրեց Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսեանը որպէս Վեհափառ Հայրապետ Ամենայն Հայոց: Ան յաջորդեց երջանկայիշատակ Գարեգին Ա. Հայրապետին և որպէս 132-րդ գահակալը բազմեց Ս. Գրիգոր Լուսաւորչի գահին՝ կոչուելով Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Այսօր իմ համեստ գրչովս պատիւն ունիմ խոնարհաբար անդրադառնալու ազգընտիր Վեհափառ Հայրապետի մեծաշուք անձին ու գործունէութեանը: Նորին Սրբութեանը ծանոթացայ Իր աբեղայական շրջանին՝ երբ ես որպէս ուսանող կ'աշակերտէի Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը: Տակաւին թարմ են իմ յիշողութեան մէջ Վեհափառ Հօր քաջալերական ու գնահատանքի խօսքերը, խրատներն ու յորդորները, ջերմ ու մտերմիկ զրոյցները: Անոր Քրիստոսանուէր առաքելութեան համբաւը տարածուած էր ոչ միայն Հայաստանէն ներս, այլև Սփիւռքի ողջ հայ օջախներուն մէջ: Վեհափառ Հօր ներշնչման աղբիւրը եղաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց երջանկայիշատակ Հայրապետը: Տակաւին աբեղայութեան շրջանին այժմեան նորընտիր Հայրապետը դրսևորեց ուժեղ կամք ու նուիրում, և այս հանգամանքը չվրիպեց հոգելոյս Վազգէն Ա. Հայրապետի ուշադրութիւնից:

Նա յանձին նորընտիր Վեհափառի տեսնելով առաքինասիրութեան շնորհներ, արժանացրեց եպիսկոպոսական Սուրբ աստիճանին և վստահեց Արարատեան Հայրապետական թեմի պատասխանատու պաշտօնը:

Նորին Սրբութիւնը օժտուած է վարչա-կազմակերպչական բարձր կարողութեամբ: Այսօր Հայաստանի մէջ Արարատեան թեմը ծաղկուն և բարգաւաճ շրջանի մէջ կ'ապրի: Ան դարձաւ հոգևոր ու շինարար առաջնորդ: Իր օրօք նորոգուեցան եկեղեցիներ, բացուեցան նորանոր բարեգործական, կրօնական ու դաստիարակչական հաստատութիւններ, որոնք մինչև օրս բացառիկ յաջողութեամբ կը շարունակեն իրենց մարդասիրական ու բարեսիրական գործունէութիւնը յօգուտ Հայ Եկեղեցւոյս և հայ ժողովրդեան: Ի յարգանս Իր Հոգևոր Հօր անմոռանալի յիշատակին՝ նորընտիր Հայրապետը հաստատեց Վազգէնեան Ճեմարանը, որն այսօր ունի շնորհալի ուսանողներ ու շրջանաւարտ եկեղեցականներ:

Նորընտիր Հայրապետը Իր ազգանուէր ու եկեղեցաշէն գործունէութեան շնորհիւ արժանացաւ ժողովուրդին սիրոյն ու յարգանքին: Ան հետաքրքրուեցաւ Իր հօտի բոլոր կարիքներով: Ուրախութեան պահուն՝ բաժնեկից եղաւ: Իսկ տխրութեան պահուն՝ ապրեցաւ ու զգաց Իր ժողովուրդին ցաւն ու վիշտը:

Ահա թէ ինչու ժողովրդականութիւն վայելող Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսեանը արժանացաւ Հայ Եկեղեցւոյ նուիրապետական կարգի բարձրագոյն աստիճանին: Արդարև, Աստուծոյ կամքն էր, որ Ան բազմէր առաքելահիմն ու Լուսաւորչափայլ Ս. Գահին:

Ազգընտիր Հայրապետը տեսիլքով ապրեցաւ, հաւատքով կերտեց ու սիրով պիտի շարունակէ պայծառացնել Հայ Եկեղեցին: Ան Բարի Նաւապետը պիտի դառնայ ողջ հայութեան համար, և իմաստութեամբ պիտի ղեկավարէ Հայոց Նաւը՝ պահպանելով զայն ամէն տեսակի փոթորկումներէ ու հողմերէ: Ան իր աստուածային սրբարար պարգևներով պիտի առաջնորդէ Հայ Եկեղեցին՝ բոլորելու 2000-ամեակը և նոր դարաշրջանի բացումով Ան պիտի վերանորոգէ ու բարելաւէ Հայ Եկեղեցւոյ սրբազնասուրբ առաքելութիւնը: Հաւատում եմ, որ Հայ Եկեղեցին պիտի ապրի պատմական սուրբ օրեր Նորին Սրբութեան նախագահութեամբ և օրհնութեամբ պիտի տօնախմբէ քրիստոնէութիւնը պետական կրօն ընդունելու 1700-ամեակը:

Այսօր մեր Հայրապետը կը շարունակէ Ս. Գրիգոր Լուսաւորչէն սկսող դարաւոր գործունէութիւնը: 21-րդ դարուն առկայ են կեանքի տարբեր պայմաններ ու պահանջքներ, սակայն Եկեղեցւոյ առաքելութեան հիմնական նպատակը նոյնն է. ցանել հաւատքի հունդը մեր ժողովուրդի սիրտերուն ու հոգիներուն մէջ և զայն աճեցնել ու ծաղկեցնել ի փրկութիւն հոգւոց և մարմնոց:

Ինչպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչ դարձաւ իր դարաշրջանի առաջին Հայրապետը, այնպէս ալ Գարեգին Բ. Կաթողիկոսը դարձաւ մեր նոր դարաշրջանի ճշմարիտ Հովուապետը, որ պիտի լուսաւորէ հայ ժողովուրդի միտքերը Լուսաւորչի անմար կանթեղի ցոլքով ու պիտի վանէ խաւարն երկրային՝ Աւետարանի վսեմ քարոզչութեամբ և Ս. Խաչի յաղթական վերամբարձմամբ:

Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի, քանզի ընտրեցիր արժանաւորագոյն Հայրապետն Ամենայն Հայոց, որ ունի Ս. Հոգիի շնորհազարդ արժանիքներ, ինչպիսիք են՝ «Սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն» (ԳԱՂ. Ե. 22-23): Ցնծա Եկեղեցի Սուրբ, որ ունիս Քրիստոսազարդ Վեհապետն Ամենայն Հայոց, որ հանգոյն Մովսիսի պիտի առաջնորդէ Իր հաւատացեալ հօտը կատարեալ աստուածպաշտութեամբ դէպի փրկութիւն պարգևող և հոգիներու անդորրութիւն շնորհող Աւետարանի Լոյսին:

Թող Ամենախնամ Աստուած երկար ու քաջառողջ կեանք պարգևէ Մեր նորընտիր ու ազգընտիր Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին և Ծայրագոյն Պատրիարքին Ամենայն Հայոց: